ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-14/2-1

ք. Երևան «17» հուլիսի 2018 թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Բուկինիստ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Խ. Վարդանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10** օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն թանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **182,547 (հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր քառասունյոթ)** ՀՀ դրամ, ընդ որում սույն պայմանագրով նախատեսված 1, 7, 9, 21, 23, 27, 28 և 34-րդ անվանատողերի մասով մասնակիցը վճարում է ԱԱՀ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2018թ:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Սույն պայմանագրով նախատեսված ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերություններ

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա

չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման

պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական հանձնաժողովը**:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Բուկինիստ» ՍՊԸ
ք. Երևան Բագրամյան 5	Ք.Երևան, Մաշտոցի պող. 20
ՀՀ ՖՆ աշխատակազմի գանձապետական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011[illegible]4079	Հ/Հ 1150000443760200
ՀՎՀՀ 02[illegible]157	ՀՎՀՀ 02517432
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N 1
ԳՀԱՊՁԲ-14/2-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Այ էս Բի էն ISBN	վերնագիր	հեղինակ	էջերի քանակ	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	ծագման երկիրը	տարեթիվ	լեզու	հրատարակիչ
		1. Գրադարանի գրքեր, այդ թվում								
1	978-5-91131-763-8	Նովիյե ինֆորմացիոննիյե կոմունիկացիոննիյե տեխնոլոգիի վ օբրազովանիի	Տրայնև Վ. Ա., Տեպլիշև Վ. Յու., Տրայնև Ի. Վ.	134	չունի	Դաշկով ի Կ	ՌԴ	2008	Ռուսերեն	Դաշկով ի Կ
2	978-1334275593	Դը Մըդորես Թիրըընի ըվ դը Թըրքս	Թոյնբի Էյ. Ջ.	319	չունի	Ֆըրգոթնբուքս	ՄԹ	2016	Անգլերեն	Ֆըրգոթն բուքս
3	978-9939-64-241-3	Դը Յու-Էս - Արմենիան Ռիլեյշընն ֆրոմ 1991 թու 2000	Մելիքյան Ս.	630	չունի	Լիմուշ	Հայաստան	2016	Անգլերեն	Լիմուշ
4	978-1-137-32668-3	Թըրքի ին դը քոլդ վոր. Այդիոլըջի ընդ քալչը	Քարգոպ Օրնեկ	264	չունի	Փալգրավ	ՄԹ	2013	Անգլերեն	Փալգրավ
5	978-99930-71-82-2	Փաստարկում և հռետորություն	Հովհաննիսյան Հ.	144	չունի	Երևան	Հայաստան	2015	Հայերեն	Երևան
6	978-5-9906287-0-0	Ռեզնյա վ Բակու 1905 գ.	Նովիկով Ա.	240	չունի	Անտիտոպոր	ՌԴ	2015	Ռուսերեն	Անտիտոպոր
7	978-9939-69-036-0	Ռուսական կայսրության զինված ուժերի հայազգի հրետանավորները (XIX դարի վերջ- XX դարի սկիզբ)	Փահլևանյան Կ.	110	չունի	Լուսաբաց	Հայաստան	2013	Հայերեն	Լուսաբաց
8	978-5-9906287-2-4	Սասունսկայա ռեզնյա	Գրին Ֆրիդրիխ	110	չունի	Անտիտոպոր	ՌԴ	2016	Ռուսերեն	Անտիտոպոր
9	978-9939-75-019-4	Հայոց տնտեսական ցեղասպանություն. փաստերի ժողովածու	Դադայան Խ.	134	չունի	ԷդիթՊրինտ	Հայաստան	2016	Հայերեն	Էդիթ Պրինտ
10	9781568593111	Արմենիան Քըմյունիթիս ըվ դը Նորթիսթերն Մեդիթըրեյնիեն	Հովհաննիսյան Ռ.	356	չունի	ՄազդաՓաբլիշերս	Հայաստան	2016	Անգլերեն	Մազդա Փաբլիշերս
11	978-9939-1-0447-8	Ազգ և հայրենիք	Քաջազնունի Հ.	224	չունի	Անիկենտրոն	Հայաստան	2016	Հայերեն	Անի կենտրոն
12	978-5-93491-572-9	Բրատսկայա պոմոշչ պոստրադավշիմ վ Տուրցիի արմյանամ	Խաչիկյանց Ա.	264	չունի	Պրոսվիշչենիե	ՌԴ	2014	Ռուսերեն	Պրոսվիշչենիե
13	978-9939-51-941-8	Հայ-ռուս հարաբերությունների 1720-2015 թթ. նենգափոխված պատմության սրբագրումներ	Համբարձումյան Ռ.	272	չունի	Երևան	Հայաստան	2016	Հայերեն	Երևան
14	978-99941-0-704-9	Հայաստանի Հանրապետություն: Լոնդոնից-Սեվր, փետրվար-օգոստոս, 1920	Հովհաննիսյան Ռ.	160	չունի	ՏիգրանՄեծ	Հայաստան	2015	Հայերեն	Տիգրան Մեծ
15	978-99941-0-719-3	Հայաստանի Հանրապետություն: Սալի և մանգաղի միջև. մասնատում և խորհրդայնացում	Հովհաննիսյան Ռ.	96	չունի	ՏիգրանՄեծ	Հայաստան	2016	Հայերեն	Տիգրան Մեծ
16	978-9939-871-09-7	Հայաստանի դեմ 1920թ. կատարված ռուս-թուրք-ադրբեջանական զինված ագրեսիայի սնուցող արմատները	Սահակյան Տ.	96	չունի	Լուսակն	Հայաստան	2016	Հայերեն	Լուսակն
17	978-9939-10-331-0	Ինձ առանց լվանալու կթաղեք. Քրդերը հայոց ցեղասպանության մասին	Շաքարյան Ա.	80	չունի	Վերնատուն	Հայաստան	2015	Հայերեն	Վերնատուն
18	978-99930-974-9-5	Կարաբախսկիյ միրնիյ պրոցես. Վզգլյադ իզ Արցախա	Մայիլյան Մ.	96	չունի	Դե-Ֆակտո	Հայաստան	2016	Հայերեն	Դե-Ֆակտո
19	978-99941-0-463-5	ԼՂՀ պաշտպանության բանակ	Հասրաթյան Ս.	166	չունի	ՏիգրանՄեծ	Հայաստան	2013	Հայերեն	Տիգրան Մեծ
20	978-5-550-01735-7	Տպագրության արվեստը և հայք	Ալպոյաճեան Ա.	235	չունի	Նաիրի	Հայաստան	2013	Հայերեն	Նաիրի
21	978-99941-2-850-1	Շարժում 1988/25	խմբ. Պողոսյան Ե.	360	չունի	Մեդիամաքս	Հայաստան	2013	Հայերեն	Մեդիամաքս

22	978-0-19-513704-0	Դը Սթրաքչը ըվ Սովիեթ Հիսթըրի: Էսեյս ընդ դոքյումենթս	Ռոնալդ Գրեգոր Սյունի	240	չունի	ՕքսֆորդՅունիվերսիթիՊրես	ՄԹ	2002	Անգլերեն	Օքսֆորդ Յունիվերսիթի Պրես
23	978-5-9955-0722-2	Բլիցկրիգ: կակ էտը դյելայետսյա? Սեկրետ "մոլնիենոսնոյ վոյնի"	Մուխին Յու. Ի.	626	չունի	Յաուզա-Պրես	ՌԴ	2014	Ռուսերեն	Յաուզա-Պրես
24	978-99930-0-251-2	ԻՅու Փոլիսի ին դը Սոուդ Քոքըզուս Ռիջըն. ֆրոմ Յունիֆոմ Ափրոչ թու Դիֆերենշիեյշըն	Գևորգյան Ն.	168	չունի	ՈսկանԵրևանցի	Հայաստան	2016	Անգլերեն	Ոսկան Երևանցի
25	978-0-521-14808-5	Օյլ իզ նոթ ը Քըրս. Օնըշիփ Սթրաքչը ընդ Ինսթիթուշընս ին Սովիեթ Սրքսեսը Սթեյթս	Լիոնգ Պ. Ջ.	736	չունի	ՔեմբրիջՅունիվեսիթիՊրես	ՄԹ	2010	Անգլերեն	Քեմբրիջ Յունիվեսիթի Պրես
26	978-0-521-10120-2	Ռիսթրաքչըրինգ փոսթ-քոմինիսթ Ռաշա	Հոֆմըն Էս., Ֆրանկել Ջ.	258	չունի	ՔեմբրիջՅունիվեսիթիՊրես	ՄԹ	2008	Անգլերեն	Քեմբրիջ Յունիվեսիթի Պրես
27	978-9939-51-965-4	Հայաստանը միգրացիոն հիմնախնդիրների խաչմերուկում	Գևորգյան Վարդան.	190	չունի	Անտարես	Հայաստան	2016	Հայերեն	Անտարես
28	978-5-16-010282-5	Պոլիտիչեսկիյե պրոիզվեդենիա	Շպենգլեր Օ.	304	չունի	Ինֆրա	ՌԴ	2015	Ռուսերեն	Ինֆրա
29	978-9939-1-0356-3	Իրավունքը և արդարադատությունն Արցախում	Հովսեփյան Վ.	396	չունի	Դիզակպլյուս	Հայաստան	2016	Հայերեն	Դիզակ պլյուս
30	978-9939-68-460-4	Միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգը և տեսությունները	Հովհաննիսյան Լ.	336	չունի	Զանգակ	Հայաստան	2016	Հայերեն	Զանգակ
31	978-5-8080-1252-3	Ազգային անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը	Սեդրակյան Ա.	252	չունի	Գիտություն	Հայաստան	2016	Հայերեն	Գիտություն
32	978-5-8084-1973-5	Միջանձնային հաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում	Ալեքսանյան Ա.	320	չունի	ԵՊՀ	Հայաստան	2015	Հայերեն	ԵՊՀ
33	978-9939-60-342-1	Հայոց լեզվի կետադրության ձեռնարկ	Սահակյան Վ.Ա., Սահակյան Վ, Վ,	320	չունի	ՎՄՎ-ՊՐԻՆՏ	Հայաստան	2016	Հայերեն	ՎՄՎ-ՊՐԻՆՏ
34	978-5-91134-927-1	Բիբլիոտեկովեդենիե. Իստորիա բիբլիոտեկ ի իխ սովրեմեննոյե սոստոյանիե	Այոշին Լ. Ի.	528	չունի	Ֆորում	ՌԴ	2015	Ռուսերեն	Ֆորում

1. Գրքերը պետք է լինեն պաշտոնական հրատարակության և պաշտպանված լինեն հեղինակային և հարակից իրավունքներով:
2. Մատակարարման ենթակա ապրանքները հանդիսանում են հիմնական միջոցներ, որոնց երաշխիքային ժամկետն է 365 օր:
3. Ապրանքները պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ ՊԱՀՀ՝ քաղաք Երևան, Կ. Ռիլեցու 56/6 հասցեով:

ՀՀ պաշտպանության նախարարության
ՀՀ պաշտպանության նախարարության տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

«Բուկինիստ» ՍՊԸ
տնօրեն

ՎԱՃԱՌՈՂ

Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Միավորի գինը/դրամ/	Ընդհանուր գումար /դրամ/	Գնման ժամանակացույց
1	Նովիյե ինֆորմացիոննիյե կոմունիկացիոննիյե տեխնոլոգիի վ օբրազովանիի	հատ	1	450	450	2018թ. օգոստոս
2	Դը Մըդորես Թիրըընի ըվ դը Թըրքս	հատ	1	450	450	2018թ. օգոստոս
3	Դը Յու-Էս - Արմենիան Ռիլեյշըն ֆրոմ 1991 թու 2000	հատ	1	3,240	3,240	2018թ. օգոստոս
4	Թըրքի ին դը քոլդ վոր. Այդիոլըջի ընդ քայչը	հատ	1	15,390	15,390	2018թ. օգոստոս
5	Փաստարկում և հռետորություն	հատ	1	5,850	5,850	2018թ. օգոստոս
6	Ռեզնյա վ Բակու 1905 գ.	հատ	1	2,610	2,610	2018թ. օգոստոս
7	Ռուսական կայսրության զինված ուժերի հայազգի հրետանավորները (XIX դարի վերջ- XX դարի սկիզբ)	հատ	1	1,080	1,080	2018թ. օգոստոս
8	Սասունսկայա ռեզնյա	հատ	1	2,835	2,835	2018թ. օգոստոս
9	Հայոց տնտեսական ցեղասպանություն. փաստերի ժողովածու	հատ	1	15,480	15,480	2018թ. օգոստոս
10	Արմենիան Քըմյունիթիս ըվ դը Նորթիսթերն Մեդիթըրեյնիեն	հատ	1	6,435	6,435	2018թ. օգոստոս
11	Ազգ և հայրենիք	հատ	1	2,610	2,610	2018թ. օգոստոս
12	Բրատսկայա պոմոշչ պոստրադավշիմ վ Տուրցիի արմյանամ	հատ	1	11,574	11,574	2018թ. օգոստոս
13	Հայ-ռուս հարաբերությունների 1720-2015 թթ. նենգափոխված պատմության սրբագրումներ	հատ	1	810	810	2018թ. օգոստոս
14	Հայաստանի Հանրապետություն: Լոնդոնից-Սեվր, փետրվար-օգոստոս, 1920	հատ.	1	6,480	6,480	2018թ. օգոստոս
15	Հայաստանի Հանրապետություն: Սալի և մանգաղի միջև. մասնատում և խորհրդայնացում	հատ	1	6,480	6,480	2018թ. օգոստոս
16	Հայաստանի դեմ 1920թ. կատարված ռուս-թուրք-ադրբեջանական զինված ագրեսիայի սնուցող արմատները	հատ	1	4,500	4,500	2018թ. օգոստոս
17	Ինձ առանց լվանալու կթաղեք. Քրդերը հայոց ցեղասպանության մասին	հատ	1	4,500	4,500	2018թ. օգոստոս
18	Կարաբախսկիյ միրնիյ պրոցես. Վզգլյադ իզ Արցախա	հատ	1	5,310	5,310	2018թ. օգոստոս
19	ԼՂՀ պաշտպանության բանակ	հատ	1	5,850	5,850	2018թ. օգոստոս
20	Տպագրության արվեստը և հայք	հատ	1	3,060	3,060	2018թ. օգոստոս
21	Շարժում 1988/25	հատ	1	1,575	1,575	2018թ. օգոստոս
22	Դը Սթրաքչը ըվ Սովիեթ Հիսթըրի: Էսեյս ընդ դոքյումենթս	հատ	1	13,860	13,860	2018թ. օգոստոս
23	Բլիցկրիգ: կակ էտը դյելայետսյա? Սեկրետ "մոլնիենոսնոյ վոյնի"	հատ	1	4,230	4,230	2018թ. օգոստոս
24	ԻՅու Փոլիսի ին դը Սոուդ Քոքըզուս Ռիջըն. ֆրոմ Յունիֆոմ Ափրոչ թու Դիֆերենշիեյշըն	հատ	1	6,300	6,300	2018թ. օգոստոս
25	Օյլ իզ նոթ ը Քըրս. Օնըշիփ Սթրաքչը ընդ Ինսթիթուշընս ին Սովիեթ Սըքսեսը Սթեյթս	հատ	1	8,460	8,460	2018թ. օգոստոս
26	Ռիսթրաքչըրինգ փոսթ-քոմինիսթ Ռաշա	հատ	1	9,387	9,387	2018թ. օգոստոս

27	Հայաստանը միգրացիոն հիմնախնդիրների խաչմերուկում	հատ	1	3,186	3,186	2018թ. օգոստոս
28	Պոլիտիչեսկիյե պրոհզվեդենիա	հատ	1	8,190	8,190	2018թ. օգոստոս
29	Իրավունքը և արդարադատությունն Արցախում	հատ	1	2,610	2,610	2018թ. օգոստոս
30	Միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգը և տեսությունները	հատ	1	3,240	3,240	2018թ. օգոստոս
31	Ազգային անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը	հատ	1	5,400	5,400	2018թ. օգոստոս
32	Միջանձնային հաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում	հատ	1	3,240	3,240	2018թ. օգոստոս
33	Հայոց լեզվի կետադրության ձեռնարկ	հատ	1	1,035	1,035	2018թ. օգոստոս
34	Բիբլիոտեկովեդենիե. Իստորիա բիբլիոտեկ ի իխ սովրեմեննոյե սոստոյանիե	հատ	1	6,840	6,840	2018թ. օգոստոս
	Ընդամենը				182,547	

Հավելված N 2
ԳՀԱՊՁԲ-14/2-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ., այդ թվում՝				
			Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.18թ
1	Նովիյե ինֆորմացիոննիյե կոմունիկացիոննիյե տեխնոլոգիի վ օբրազովանիի	22111120/1/10/1	450	450	450	450	450
2	Դը Մըդորես Թիրըընի ըվ դը Թըրքս	22111120/1/10/1	450	450	450	450	450
3	Դը Յու-Էս - Արմենիան Ռիլեյշընն ֆրոմ 1991 թու 2000	22111120/1/10/1	3,240	3,240	3,240	3,240	3,240
4	Թըրքի ին դը քոլդ վոր. Այդիոլըջի ընդ քալչը	22111120/1/10/1	15,390	15,390	15,390	15,390	15,390
5	Փաստարկում և հռետորություն	22111120/1/10/1	5,850	5,850	5,850	5,850	5,850
6	Ռեզնյա վ Բակու 1905 գ.	22111120/1/10/1	2,610	2,610	2,610	2,610	2,610
7	Ռուսական կայսրության զինված ուժերի հայազգի հրետանավորները (XIX դարի վերջ- XX դարի սկիզբ)	22111120/1/10/1	1,080	1,080	1,080	1,080	1,080
8	Սասունսկայա ռեզնյա	22111120/1/10/1	2,835	2,835	2,835	2,835	2,835
9	Հայոց տնտեսական ցեղասպանություն. փաստերի ժողովածու	22111120/1/10/1	15,480	15,480	15,480	15,480	15,480
10	Արմենիան Քըմյունիթիս ըվ դը Նորթիսթերն Մեդիթըրեյնիեն	22111120/1/10/1	6,435	6,435	6,435	6,435	6,435
11	Ազգ և հայրենիք	22111120/1/10/1	2,610	2,610	2,610	2,610	2,610
12	Բրատսկայա պոմոշչ պոստրադավշիմ վ Տուրցիի արմյանամ	22111120/1/10/1	11,574	11,574	11,574	11,574	11,574
13	Հայ-ռուս հարաբերությունների 1720-2015 թթ. նենգափոխված պատմության սրբագրումներ	22111120/1/10/1	810	810	810	810	810
14	Հայաստանի Հանրապետություն: Լոնդոնից-Սեվր. փետրվար-օգոստոս, 1920	22111120/1/10/1	6,480	6,480	6,480	6,480	6,480
15	Հայաստանի Հանրապետություն: Սալի և մանգաղի միջև. մասնատում և խորհրդայնացում	22111120/1/10/1	6,480	6,480	6,480	6,480	6,480
16	Հայաստանի դեմ 1920թ. կատարված ռուս-թուրք-ադրբեջանական զինված ագրեսիայի սնուցող արմատները	22111120/1/10/1	4,500	4,500	4,500	4,500	4,500

17	Ինձ առանց լվանալու կթաղեք. Քրդերը հայոց ցեղասպանության մասին	22111120/1/10/1	4,500	4,500	4,500	4,500	4,500
18	Կարաբախսկիյ միրնիյ պրոցես. Վզգլյադ իզ Արցախա	22111120/1/10/1	5,310	5,310	5,310	5,310	5,310
19	ԼՂՀ պաշտպանության բանակ	22111120/1/10/1	5,850	5,850	5,850	5,850	5,850
20	Տպագրության արվեստը և հայք	22111120/1/10/1	3,060	3,060	3,060	3,060	3,060
21	Շարժում 1988/25	22111120/1/10/1	1,575	1,575	1,575	1,575	1,575
22	Դը Սթրաքչը ըվ Սովիեթ Հիսթըրի: Էսեյս ընդ դոքյումենթս	22111120/1/10/1	13,860	13,860	13,860	13,860	13,860
23	Բլիցկրիգ: կակ էտը դյելայետսյա? Սեկրետ "մոլնիենոսնոյ վոյնի"	22111120/1/10/1	4,230	4,230	4,230	4,230	4,230
24	ԻՅու Փոլիսի ին դը Սոուդ Քոքըզուս Ռիջըն. ֆրոմ Յունիֆոմ Ափրոչ թու Դիֆերենշիեյշըն	22111120/1/10/1	6,300	6,300	6,300	6,300	6,300
25	Օյլ իզ նոթ ը Քըրս. Օնըշիփ Սթրաքչը ընդ Ինսթիթուշընս ին Սովիեթ Սըքսեսը Սթեյթս	22111120/1/10/1	8,460	8,460	8,460	8,460	8,460
26	Ռիսթրաքչըրինգ փոսթ-քոմինիսթ Ռաշա	22111120/1/10/1	9,387	9,387	9,387	9,387	9,387
27	Հայաստանը միգրացիոն հիմնախնդիրների խաչմերուկում	22111120/1/10/1	3,186	3,186	3,186	3,186	3,186
28	Պոլիտիչեսկիյե պրոիզվեդենիա	22111120/1/10/1	8,190	8,190	8,190	8,190	8,190
29	Իրավունքը և արդարադատությունն Արցախում	22111120/1/10/1	2,610	2,610	2,610	2,610	2,610
30	Միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգը և տեսությունները	22111120/1/10/1	3,240	3,240	3,240	3,240	3,240
31	Ազգային անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը	22111120/1/10/1	5,400	5,400	5,400	5,400	5,400
32	Միջանձնային հաղորդակցման իրականացումը կրթական գործընթացում	22111120/1/10/1	3,240	3,240	3,240	3,240	3,240
33	Հայոց լեզվի կետադրության ձեռնարկ	22111120/1/10/1	1,035	1,035	1,035	1,035	1,035
34	Բիբլիոտեկովեդենիե. Իստորիա բիբլիոտեկ ի իխ սովրեմեննոյե սոստոյանիե	22111120/1/10/1	6,840	6,840	6,840	6,840	6,840

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Բուկինիստ» ՍՊԸ
տնօրեն

Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N 3
ԳՀԱՊՁԲ-14/2-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
ԳՀԱՊՁԲ-14/2-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն